ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան «27» հունվարի 2025թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 10-Ա/1

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ 2025» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հուլիսի 12-ի N 28-Լ հրամանի հավելվածի 18-րդ մասի 7-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի հունվարի 24-ի N 211-Ա/2 հրամանը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ն Ւ Մ ԵՄ

1. Կազմակերպել Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Երկակի նշանակության գիտական նախագծեր 2025» մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ)՝

1) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) հանրային կապերի և տեղեկատվության բաժնին (պետ՝ Աստղիկ Մելիք-Քարամյան)՝ ապահովել Մրցույթի հայտարարության հրապարակումը, Մրցույթի հրավերի փաթեթի և արդյունքների տեղադրումը Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում.

2) Կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչությանը (պետ՝ Անի Վիրաբյան)՝

ա. ապահովել Մրցույթի հայտ ներկայացնողներին խորհրդատվության տրամադրումը,

բ. կազմակերպել հայտերի թղթային տարբերակների ընդունումը,

գ. կազմակերպել Մրցույթի արդյունքում շահառու ճանաչված հայտատուների հետ պայմանագրերի կնքումը.

3) Կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչությանը (պետ՝ Արսեն Հակոբյան)՝

ա. ապահովել Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգով Մրցույթի մասնակցության հայտերի ընդունումը,

բ. ապահովել Մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը,

գ. ապահովել Մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտատուներին սահմանված կարգով իրազեկումը.

4) Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տիգրան Գալստյան)՝ սահմանված կարգով ապահովել Մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրումը:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ